«ՄԱՅՐԵՆԻՐ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

երեխաների և երիտասարդների հայեցի դաստիարակությամբ: Ուզում ենք հզորացնել համայնքը: Բացել ենք հայոց լեզվի, երաժշտական կրթության խմբակներ: Շատ ծրագրեր ունենք իրականացնելու, – մեզ հետ զրույցում ասաց համայնքի երիտասարդ ղեկավար Ռուսլան Կագրամանյանը:

Իսկ կողքի սենյակից լսվում էր նվագարանների մեղեդիներ: «Վանաձոր»-ի դհոլի հայկական զարկերն էին զարդարել համայնքի դահլիճը՝ հայի ոգու խրոխտ հնչյունները տարածելով շուրջբոլորը: Այս դահլիճում ծանոթացանք համառուսաստանյան բազմաթիվ մրցույթների դափնեկիր «Վանաձոր» դհոլահարների անսամբլի գործունեությանը, հիացանք, վայելեցինք պատանի երաժիշտների կատարումները՝ գեղարվեստական ղեկավար Վրեժ Բուլղադարյանի ղեկավարությամբ: Ուրախությունը, ոգևորությունն ու հուզմունքը միախառնվել էին, երբ վարպետն իր աշակերտների հետ միասին վարպետության դաս էր տալիս ճամբարականներին, ստուգում նրանց երաժշտական լսողությունը:

Համայնքից դուրս եկանք հոգեպես հարստացած ու հպարտ կեցվածքով մեր զբոսանքը շարունակեցինք քաղաքի ծովափնյա ճեմուղով:

դրա վկայություններն էին երեխաների կերտած անզուգական կերպարները:

Բեմականացումները գունագեղ ու բովանդակալից էին, զգացինք Թումանյանին, մեր մանկությունը: Այս ներկայացումները, այնուհետև երեխաների երգն ու պարը հեքիաթ դարձրեցին բոլորիս օրը: Կրկին մտքներումս պտտվեց այն պարզ միտքը, որ Թումանյանը հասկանալի ու սիրելի է բոլոր տարիքներում և կրթում ու դաստիարակում է մեզ մեր ողջ կյանքի ընթացքում:

ԳՅՈՒՂ ՀԱՅԿԱՁՈՐ. ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

– Գնում ենք Հայկաձոր, սիրելի ճամբարականներ, – հերթական դասից հետո ասում է տիկին Կարինե Փիլոյանը ու սկսում պատմել Հայկաձորի մասին:

– Հայկաձորը հայաբնակ գյուղ է: Գտնվում է Անապայից 9 կմ հարավ-արևելք: Գյուղը հիմնադրվել է Գալկինա Շչել բնակավայրի հողատարածքի վրա՝ այդ տարածքը վարձակալությամբ տրամադրող կալվածատիրոջ անունով: 1915-1916 թվականներին այստեղ հաստատվել են մի քանի տասնյակ հայ ընտանիքներ, ովքեր գաղթել էին Տրապիզոնից: Բնակչության աճի արդյունքում կառուցվել է մանկապարտեզ, դպրոց, ակումբ և բուժկետ: 1925 թվականին բնակիչների որոշմամբ գյուղն անվանափոխվել է և դարձել է Հայկաձոր:

Արդեն գյուղում ենք, գյուղի Սուրբ Գևորգ եկեղեցի տանող ճանապարհի աջ կողմում տեսնում ենք մի շքեղ կառույց. «Արին Բերդ» հայկական մշակութային կենտրոնն է: 2008 թվականին Տիգրան Մեծի ժամանակների ոգով կառուցված համալիրում իրականացվում են տոնախմբություններ, հայկական հարսանիքներ, ցուցահանդեսներ և այլ մշակութային միջոցառումներ:

Ահա հայտնվում ենք Սուրբ Գևորգ եկեղեցու տարածքում: Գեղեցիկ խաչքարերով շրջապատված այս տարածքում հայկական շունչն անասելի մեծ էր: 2016 թվականին է տեղի ունեցել եկեղեցու բացումը: Այստեղ գալիս են ոչ միայն հայեր, այլև օտարներ՝ հիանալու կառույցի գեղեցկությամբ և հոգևոր հզորությամբ:

– Այս տարածքը տրամադրվել է Սուրբ Գևորգի եկեղեցական համայնքին: Ինքնատիպ խաչքարերով հարուստ եկեղեցին ամեն տարի մայիսի վերջին կիրակին տոնում է խաչքարի տոնը, – մեզ է պատմում եկեղեցու քահանա Տեր Երեմիա Սարգըսյանը:

Եկեղեցու տարածքում կար կահավորված դասարան, որտեղ ամեն կիրակի հայերենի դասեր է տալիս Կարինե Փիլոյանը: Կար գեղեցիկ նկարների պատկերասրահ, որտեղ ցուցադրվում էին Անապայի հայ տաղանդավոր նկարիչների նկարները:

Ճամբարականներիս օրը շարունակվեց բնության գրկում հանգստով, համեղ խորոված սեղանի շուրջ հաճելի զրույցով, խաղալով, երգելով ու պարելով:

ՍԱՔԱՆՅԱՆՆԵՐԻ ՄՈԳՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՆ

– Այսօր մոգության երեկո է լինելու, – ասում է Կարինե Փիլոյանը:

Իրենց «Հրաշքից մեկ քայլ առաջ» շոու ծրագրով մեր հյուրերն էին Հովիկ Թեյլորը (Սաքանյան)՝ «Flash-mogic» իլյուզիոնիստների թատրոնի հիմնադիր, աճպարար, սպիտակ մոգ, հիպնոտիզյոր, բժիշկ-հոգեթերապևտ, աճպարարների միջազգային մրցույթում «Ոսկե ձեռնոց» մրցանակի մրցանակակիր (ք. Ամստերդամ, Նիդեռլանդներ) և Կարեն Թեյլորը (Սաքանյան)՝ ռեժիսոր, դերասան, իլյուզիանիստ, միջազգային և համառուսաստանյան մի շարք փառատոնների ու մրցույթների դափնեկիր, Սոչիի XXII ձմեռային օլիմպիական խաղերի հանդիսավոր փակման մասնակից, «Овация» ժողովրդական թատրոնի ղեկավար:

Հայր և որդի Սաքանյանները մեզ համար պարտաստել էին նորարարական լուծումներով հագեցած ու անկրկնելի մի ներկայացում: Շեշտը ոչ միայն դրված էր հնարքների արհեստավարժ ու գեղեցիկ մատուցման վրա, այլև լայնածավալ աշխատանք էր տարված մոգական արվեստին բնորոշ առեղծվածային ու կախարդական մթնոլորտ ստեղծելու համար:

Բեմական ձևավորումը, ձայնային և տեսողական հատուկ ազդակները, հետաքրքիր կերպարային լուծումներն ու ներկայացման ինտերակտիվ բնույթը մեզ ամբողջովին տեղափոխել էին Հրաշքների աշխարհ: Երեխաներն անձամբ մասնակցելով մի քանի հրաշագործությունների՝ սկսեցին հավատալ իրենց գերբնական կարողություններին:

Բառերով այդ անկրկնելի զգացողությունները չես կարող փոխանցել. այս ներկայացումն անձամբ է պետք տեսնել ու թեկուզ կարճ ժամանակով տեղափոխվել այն հեքիաթային աշխարհը, որտեղ անհնարին ոչինչ չկա:

Ահա այսպիսի հագեցած հանգիստ վայելեցինք ամենահին քաղաք-առողջարանում: Անապայի ծովափը՝ իր ամենավառ արևով, ջրաշխարհը՝ բացօթյա լողավազաններով, ջրային ատրակցիոններով, «Նեմո» դելֆինարիումը և շատ այլ հանգստի և զվարճանքի կենտրոններ...

Շնորհակալություն այս հետաքրքիր ծրագիրն իրականություն դարձնող հայրենասեր ուսուցչուհուն՝ Կարինե Փիլոյանին, Անապայի հայ համայնքի ներկայացուցիչներին, ովքեր ջանք ու եռանդ չխնայեցին ևս մեկ հայանպաստ ծրագիր հովանավորելու և կյանքի կոչելու:

Մինչ նոր հանդիպում...

Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿԻ «ԱՄՊԻ ԿՏՈՐՆԵՐԸ». ՀԵՔԻԱԹ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

– Այսօր հյուրեր ունենք, – ասում է տիկին Կարինե Փիլոյանը, – մեզ են այցելելու Նովոռոսիյսկ քաղաքի «Լույս» կրթամշակութային կենտրոնի ենթակայությամբ գործող «Кусочек неба» թատերական ստուդիայի սաները և ներկայացնելու են Հովհաննես Թումանյանի հեքիաթների բեմադրությունները:

Ոգևորված իջնում ենք դպրոց. հյուրեր ունենք... Ծանոթանում ենք երեխաների հետ, թատերախմբի ղեկավարը պատմում է ստուդիայի մասին և սկսվում է հեքիաթը. «Մի կաթիլ մեղրը», «Կիկոսի մահը», «Ճամփորդները», Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Աղոթքը»:

Նարինե Մանուկյանը Թումանյանի հեքիաթների միջոցով երեխաներին կարողացել էր մղել ժողովրդական վեհ իդեալների հաղթանակի համար պայքարի.